ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2026 թվականի N 40 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 245-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի «Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանելու մասին» N 245-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի աղյուսակի «Հիգիենիկ պարագաներ» վերտառությամբ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Հիգիենիկ պարագաներ			
1.	Հիգիենիկ փաթեթ հետևյալ պարագաներից՝	հավաքածու	1	շաբաթական
1.1	Օճառ՝ ձեռքի	գրամ	80	շաբաթական
1.2	Լոգանքի գել	միլիլիտր	30	շաբաթական

1.3	Շամպուն	միլիլիտր	30	շաբաթական
1.4	Մեկանգամյա օգտագործման երկսայրանի ածելի	հատ	1	շաբաթական
1.5	Սափրվելու մածուկ	միլիլիտր	10	շաբաթական
1.6	Ատամի մածուկ	միլիլիտր	15	շաբաթական
1.7	Ջուգարանի թուղթ	հատ	1	շաբաթական
2.	Ատամի խոզանակ	հատ	4	1 տարի
3.	Սանր տղամարդու	հատ	2	1 տարի
4.	Սանր կանացի	հատ	2	1 տարի
5.	Լվացքի փոշի	գրամ	40	1 կգ լվացքի հաշվարկով
6.	Կանացի հիգիենայի միջոցներ	հատ	20	ամսական
7.	Սպասք լվալու հեղուկ	միլիլիտր	100	ամսական

».

2) որոշման N 1 հավելվածի աղյուսակի «Իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց համար հիգիենիկ պարագաներ» վերտառությամբ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց համար հիգիենիկ պարագաներ				
1.	Մանկական օճառ	գրամ	200	ամսական
2.	Լվացքի փոշի	գրամ	1000	ամսական
3.	Մանկական տակդիր	հատ	6	1 օր
4.	Մանկական կերակրաշիշ	հատ	2	6 ամիս
5.	Մանկական հիգիենիկ խոնավ անձեռոցիկ	տուփ /առնվազն 100 հտ/	3	ամսական
6.	Ծծակ	հատ	6	1 տարի
7.	Մանկական տաշտ	հատ	1	1 տարի

»:

2. Սույն որոշմամբ նախատեսված ապրանքները տրամադրել նախորդ ձեռք բերված համապատասխան ապրանքների սպառումից հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ